Ի. ԴԻՄԻՏՐՈՎ

5815

ԱԼՄԵՐԻԱՅԻ ԴԱՍԵՐԸ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

Գ. ԴԻՄԻՏՐՈՎ

9(46)

ԱՄԵՐԻԱՅԻ ԴԱՍԵՐԸ

Գ 38390

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՍՈՒՆԳԱՍԵՆՅԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԵՌՈՒՍՀՐԱՏ ● 1937 ● ԵՐԵՎԱՆ

Г. ДИМИТРОВ
УРОКИ АЛЬМЕРИИ
Армпартиздат, Ереван, 1937 г.

Թարգմ. Հ. Տ.–Հովհաննիսյան
Խմբ. Հ. Հովհաննիսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Ջիդեջյան
Կոնտրոլ սրբ. Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր Ի—4204, հրատ. № 481, պատվեր № 146, տիրաժ 15,000.
Հանձնված է արտադրության 25/VII 1937 թ.
Ստորագրված է տպագրելու 27/VII 1937 թ.
ԳԻՆԸ 20 Կ.
Հայկուսհրատի տպարան, Երևան, Ալլահվերդյան № 71

Գ. ԴԻՄԻՏՐՈՎ

ԱԼՄԵՐԻԱՅԻ ԴԱՍԵՐԸ

Իսպանական Իվիսա և Ալմերիա նավահանգիստներում գերմանական զրահանավերի կատարած անլուր պրովոկացիան, վորին ուղեկցեց Ալմերիա նավահանգստային քաղաքի ռմբակոծումը մայիսի 31-ին, չի կարող դիտվել այլ կերպ, բայց եթե վորպես հիտլերյան կառավարության կողմից իսպանական հանրապետության դեմ ուղղած պատերազմի բացահայտ, լիսի ակտ: Հենց նույն որը Գերմանիայի և Իտալիայի կառավարությունները հայտարարեցին, վոր իրենք դուրս են գալիս այսպես կոչված՝ Զմիջամտելու գործերի կոմիտեից, իսպանական ջրերը նոր ռազմանավեր ուղարկելու հրաման տվին և հայտարարեցին, վոր այժմյանից նրանք Իսպանական հանրապետության վերաբերմամբ գործելու են «սեփական բարեհայեցողությամբ»: Դրա կապակցությամբ գերմանական ռազմական մինիստր Բլոմբերգը ոգանավով մեկնեց Հռոմ:

Գերմանական և իտալական ֆաշիստների ամբողջ վարքագծի պրովոկացիոն բնույթն ակներև է:

Վերջին ամիսներում, հատկապես իտալական զորքերը Գվադալախարայի մոտ ջախջախվելուց հետո, արդեն պարզ դարձավ, վոր գեներալ Ֆրանկոն, չնայած ֆաշիստական Գերմանիայի ու Իտալիայի կողմից նրան ցույց տրվող ոգնությանը, պարտություններից չի կարող խուսափել: Իսկ Ֆրանկոյի պարտությունը կնշանակեր Իսպանիայում կատարվող ամբողջ ֆաշիստական ինտերվենցիայի տապալում: Այդ պարտություններից և ֆաշիզմի համար նրա ծանր հետևանքներից խուսափելու նպատակով ռայխստագի հրկիզման սիրահոչակ հերոսները դիմում են նոր պրովոկացիաների, ձգտելով իրենց ձեռքերը լիովին արձակել՝ իսպանական ժողովրդի դեմ ուղղվելիք հետագա ռազմական գործողությունների և Իսպանիան ավազակաբար գրավելու համար: Ֆաշիստական վո՛չ մի հերյուրանքով և խորամանկությամբ չի կարելի քողարկել այս վտանգը:

Հիտլերյան կառավարության այն պնդումը, թե երբ իսպանական հանրապետականների ինքնաթիռները դրոհել են զերմանական ռազմանավի վրա, յերբ վերջինս կատարելիս է յեղել «վերահսկողության պարտականություններ»—ամբողջովին սուտ է: Առաջին,—ինչպես պարզ ցույց է տալիս արժանահավատ ինֆորմացիան,—ֆաշիստական «Դոյչլանդ» զրահանավը հարձակման չի յենթարկվել, այլ ինքն է դրոհել հանրապետական Իսպանիայի ինքնաթիռների վրա: Միայն դրանից հետո հանրապետական ինքնաթիռները ռմբակոծել են «Դոյչլանդը»: Յերկրորդ՝ զերմանական ռազմանավն ընդհանրապես անելիք չուներ խռովարարների դրաված նավահանգստում: Այդ տեղամասի նկատմամբ վերահսկողության իրագործումը, ինչպես հայտնի յե, հանձնարարված է ֆրանսական նավերին, և, հետևապես, «Դոյչլանդը» չեր կարող այդ ջրերում միջազգային վերահսկողության վո՛չ մի ֆունկցիա կատարել: Յեթե զրահանավն այնուամենայնիվ այնտեղ եր դտնվում, ապա այդ միայն ապացուցում է, վոր նա ոգնում եր խռովարարներին: Այս պատճառով ֆաշիստական ցինիզմի բարձրագույն աստիճան է այն փաստը, վոր ֆաշիստական ռազմանավերը, վորոնք, երբ թե, պետք է ապահովեին չմիջամտելը, իրենք են ռմբակոծում իսպանական քաղաքը, իսկ այժմ ֆաշիստներն իրենց ներկայացնում են վորպես հարձակման ու վիրավորանքի յենթարկված զոհեր:

Արմերիայի վրա կատարված հարձակումը, ինչպես հայտնի յե, ֆաշիստների բարբարոսական վարմունքի առաջին դեպքը չե: Վերջին շաբաթները բերում են ֆաշիստական վայրագության, դաժանության և հաղարավոր խաղաղ բնակիչների բնաջնջման ու խաղաղ քաղաքների կործանման նորանոր փաստեր: Վերջերս ֆաշիստական ավիացիան կործանեց հնագարյան Գերնիկա քաղաքը—Բասկոնիայի ազատասեր ժողովրդի ավանդական սրբություն: Ֆաշիստ խռովարարները և ինտերվենտներն ամիսներ շարունակ ձգտում են կործանել հերոսական Մադրիդը, ուզում են հողին հավասարեցնել Բիլբաոն:

Արմերիայի ռմբակոծումով և հետագա ռազմական ձեռնարկումներով հիտլերյան կառավարությունը մի անգամ ևս ուզում է համաշխարհային հասարակայնությունը «կատարված փաստի առաջ» դնել: Բեռլինի և Հռոմի իշխանավորները նորից ապիկուլացիա յեն անում, թե վոչ-ֆաշիստական պետությունները և պրոգրեսիվ հասարակայնությունը կվախենան և կդիջեն ֆաշիստական կոբզոդականությանը: Վո՛չ վոքի համար դաղտնիք չե,

վոր Ազգերի Լիգայի անդորությունը Հարեչտանի գրավման հանդեպ և արևմտյան խոշորագույն պետությունների կողմից Իսպանիայի՝ գերմանական ու իտալական ինտերվենտներին արվող մշտական զիջումները խրախուսեցին և խրախուսում են Բեռլինի ու Հռոմի կառավարությունների լկտի ագրեսիվությունը: Իսկ Բեռլինի և Հռոմի ֆաշիստական պարագլուխները հատկապես հույս են դրել այն բանի վրա, թե՝ միջազգային բանվորական շարժումն ի վիճակի չի լինի իր ցերուցան ուժերը համախմբելու՝ ֆաշիստական ագրեսիայի դեմ հաղթական պայքար մղելու համար: Հայտնի է, վոր ըստ բանի և յությունի՝ գերկչտա, հիստերիկ ֆաշիստ դաղանները վոչ մի բանից այնպես չեն վախենում, ինչպես նրանց ագրեսիայի ու պրովոկացիաների դեմ բանվոր դասակարգի և ամբողջ պրոդրեսիվ մարդկության ուղղած անվեհեր ու վճռական հակահարվածից:

Ամերիկայի ավերումը և խաղաղ բնակիչների, կանանց ու երեխաների սպանությունը ֆաշիստական ինտերվենտների ձեռքով՝ ժողովրդական զայրույթի փոթորիկ առաջ բերին բոլոր յերկիրներում: Գլուխ է բարձրացնում հասարակայնությունը, շարժվում են միլիոնավոր աշխատավորները: Սակայն խնդիրն այն է, վոր այդ ուժերը կազմակերպվեն՝ ֆաշիստական բռնացողներին ապդու հակահարված տալու համար:

Ամերիկայի ամբակոծությամբ ստեղծված դրության կապակցությամբ, Իսպանիայի սոցիալիստական կուսակցությունը, Կոմունիստական կուսակցությունը և Պրոֆմիությունների ընդհանուր միավորումը դիմեցին Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալին, Պրոֆմիությունների միջազգային միավորմանը, կոչ անելով իսպանական ժողովրդին պաշտպանելու համար համատեղ գործողություններ կազմակերպելու միջոցներ ձեռք առնել: Իսպանական բանվորական կազմակերպությունների այդ նախաձեռնությունը, վորը համապատասխանում է միլիոնավոր աշխատավորների զգացմունքներին և մտքերին ու շահերին, հարկավոր է ամեն կերպ պաշտպանել և իրագործել բոլոր յերկիրներում: Այդ դեռևս վոչ մի ժամանակ այնպես անհրաժեշտ չի յեղել, ինչպես հենց այժմ: Իսպանական բանվորական կազմակերպությունները բացարձակապես իրավացի յեն, կոչ անելով համաշխարհային պրոլետարիատին «ամենայեռանդուն միասեղ յեղությամբ ձեռնարկել, վորպեսզի կարելի լինի մոբիլիզացիայի յենթարկել բոլոր ժողովուրդների պրոլետարական համերաշխությունը, ժողովուրդներ, վորոնք

հաստատ վճռել են խանգարել ֆաշիզմի դիտավորությունների իրագործումը»:

Հարկավոր է՝ գերմանական և իտալական ֆաշիզմի կողմից Իսպանիայում կատարվող ավազակային ռազմական յելույթի դեմ անհապաղ մոբիլիզացիայի յենթարկել միջազգային բանվորական շարժման բազմամիլիոն ուժերը:

Ցուրաքանչյուրին հասկանալի յե, որ այստեղ չի կարելի դանդաղել: Ցերը դրությունն այսքան լուրջ է, միանգամայն պարզ է, որ Սոցիալիստական, Կոմունիստական և Պրոֆմիութենական ինտերնացիոնալները պետք է միատեղ խորհրդակցություն դումարեն, մշտական կոնտակտային կոմիտե ստեղծեն, նշեն բոլոր անհրաժեշտ ձեռնարկումները և անմիջապես անցնեն նրանց կիրառմանը, այսինքն՝ անեն այն, ինչ որ պահանջում են իսպանական սոցիալիստները, կոմունիստները և պրոֆմիությունների անդամները, որոնք միասին են պատերազմում և արյուն են թափում ֆաշիստական բռնացողների դեմ ուղղված պայքարում:

Ուժերը ժամանակին մոբիլիզացիայի յենթարկելու և ֆաշիստ ինտերվենտների ձեռքերին չխփելու դեպքում Ամերիկայի վրա կատարված լկտի հարձակումը կարող է բոլոր ժողովուրդների համար ծանր հետևանքներով հղի անցքերի սկիզբ դառնալ: Իսպանական ընկերները միանգամայն իրավացի յեն, յերբ միջազգային պրոլետարիատին ուղղած իրենց դիմումի մեջ ընդգծում են, թե գերմանական և իտալական ինտերվենցիայի դեմ մղվող այս կրվում գործը վերաբերում է ոչ միայն Իսպանիայի ազատությանն ու անկախությանը, այլև ընդհանուր խաղաղության պահպանմանը, ֆաշիզմի դեմ պայքարելուն, ֆաշիզմ, որը «մատդրվել և համաշխարհային հրդեհ բորբոքել»: Այս մի փաստ է, որը ո՛չ մի կասկածի յենթակա չէ: Այս պատճառով այնքան ավելի հրամայական է բոլոր բանվորական կազմակերպությունների պարտականությունը՝ հանդես դալու այժմ՝ ինչպես գործողությունների միջազգային միասնություն, նույնպես և առանձին յերկիրներում աշխատավորների գործողությունների միասնություն հաստատելու ոգուն: Միայն ամբողջ միջազգային բանվորական շարժման և խաղաղության բոլոր ազնիվ բարեկամների միավորված ուժերով կարելի յե վերջնականապես վիժեցնել ֆաշիստական բարբարոսների և պատերազմի նախամարտիկների հանցավոր դիտավորությունները:

Պետք է հիրավի քաղաքական կույր լինել՝ չտեսնելու համար,

թե ինչպիսի հսկայական նշանակություն և ինչպիսի հեռանկներ կունենար բանվոր դասակարգի ու նրա կազմակերպությունների համերաշխ յելույթն ամեն մի յերկրում և ամբողջ աշխարհում: Այդպիսի յելույթի միջոցով կարելի կլիներ թափահարել ու մոբիլիզացիայի յենթարկել ամենալայն ժողովրդական մասսաները: Անգլիական պահպանողականները, վորոնք հովանավորում են Հիտլերի և Մուսսոլինիի մեքենայությունները, սեղմված կլինեին պատին:

Անգլիական ու ֆրանսական կառավարությունները հարկադրված կլինեին յեռանդուն քայլեր նախաձեռնել գերմանական և իտալական ֆաշիզմի ինտերվենցիայի դեմ: Կարելի կլիներ հասնել այն բանին, վոր գերմանական և իտալական գինված ուժերը հեռացվեն Իսպանիայից և ինտերվենտների ռազմանավերը հետ կանչվեն իսպանական ջրերից: Կարելի կլիներ հասնել այն բանին, վոր Իսպանական հանրապետության վերաբերմամբ միջազգային իրավունք կիրառվի: Կարելի կլիներ հասնել այն բանին, վոր ֆաշիստական ինտերվենտներն ու նվաճողներն սկսեին դիտվել ըստ արժանույն՝ վորպես ագրեսորներ, ավազակներ, ծովահեններ: Ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի համերաշխ յելույթը կապահովեր Իսպանական հանրապետության և նրա հերոս մարտիկների համար վո՛չ միայն անչափելի բարոյական, այլև հսկայական նյութական ոգնություն: Այս ամենը, անկասկած, կարագացներ իսպանական ժողովրդի հաղթանակը: Վերջապես, ամբողջ աշխարհի պրոգրեսիվ ուժերի համերաշխ բուռն ճնշումով կարելի կլիներ սանձահարել պատերազմի հրձիգներին:

Հսկայական պատմական պատասխանատվություն է ընկնում այն մարդկանց վրա, վորոնցից այժմ կախված է Սոցիալիստական Բանվորական Ինտերնացիոնալի և Պրոֆմիությունների միջազգային միավորման վորոշումը: Վո՛չ մի բանով չի կարելի արդարացնել այն, վոր մինչև այժմ վիժեցվել են միջազգային պրոլետարիատի համատեղ գործողություններ կազմակերպելու փորձերն իսպանական ժողովրդի պաշտպանության գործում: Այդպես չպետք է շարունակվի և չի՛ կարող շարունակվել: Ամբողջ իրադրությունն այնպես է, վոր նա յուրաքանչյուր բանվորական կազմակերպությունից, բանվորական շարժման յուրաքանչյուր գործչից պահանջում է բոլորովին պարզ դիրք՝ իսպանական ժողովրդի պաշտպանության գործում միջազգային պրոլետարիատի կատարելիք գործողությունների միասնության հարցերում: Չի կարելի յերկու աթոռի միջև նստել:

Յուրաքանչյուր բանվորի, յուրաքանչյուր աշխատավոր սոցիալիստի առջև ակամա հարց է ծառանում. այդ ի՞նչ Բանվորական Ինտերնացիոնալ է, յեթե նա մերժելու յե միասնական ճակատի մասին արվող առաջարկությունները, յերբ նրան հարող միլիոնավոր բանվորներ հրամայողական պահանջում են գործողությունների միասնություն: Այդ ի՞նչ Սոցիալիստական Ինտերնացիոնալ է, յեթե նա մերժելու յե այն պահանջները, վորոնք բղխում են իր սեփական սեկցիաներից և նույնիսկ նրա այնպիսի սեկցիայից, ինչպիսին է Իսպանիայի սոցիալիստական կուսակցությունը, վորը կոմկուսի հետ միասին կանգնած է Ֆաշիզմի դեմ մղվող կռվի առաջավոր ճակատամասերում: Այդ ի՞նչ բանվորական, սոցիալիստական լեղեներ են, վորոնք վիժեցնելու յեն միջազգային պրոլետարիատի գործողությունների միասնությունը, յերբ հատկապես այդ միասնությունն է Ֆաշիստական բռնացողներին սանձահարելու վճռողական միջոցը: Բանվոր դասակարգի ինտերնացիոնալ համերաշխության այդ ի՞նչ կրողներ են, վորոնք վիժեցնելու յեն միջազգային պրոլետարիատի գործողությունների միասնությունը և դրանով իսկ ոգնելու յեն Ֆաշիզմին՝ կործանելու բանվորական շարժումը և մաս-մաս սարկացնելու ժողովուրդներին:

Իսպանական ժողովրդի բախտը և ընդհանուր խաղաղության գործը հրամայաբար պահանջում են բոլոր միջազգային բանվորական կազմակերպություններից գործողությունների միասնություն: Ամերիայի ռմբակոծությունը—այդ լուրջ դաս է բոլոր աշխատավորների համար, անկախ նրանց քաղաքական հայացքներից և կազմակերպական պատկանելությունից: Այդ — լուրջ նախազգուշացում է բանվորական ուժերի հետագա անջատվածության դեմ:

Միջազգային պրոլետարիատի գործողությունների միասնությունը պետք է հաստատվի և կհաստատվի:

Վալենսիայից, 1/VI: 1 ժ. 00 ր.

ԳԵՈՐԳԻ ԴԻՄԻՏՐՈՎԻՆ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ: ՄՈՍԿՎԱ

Ամերիայի ջրերում վերահսկողության ֆունկցիաներ կատարող նացիոնալ-սոցիալիստական եսկադրան մեր քաղաքի վերաբերմամբ հենց նոր կատարեց սոսոր ագրեսիայի մի ակտ, վորը դերազանցում է մեր յերկիրը ներխուժած գերմանական և իտալական ֆաշիզմի բոլոր չարագործություններից: Խախտելով միջազգային իրավունքի բոլոր նորմաները, վոտնահարելով միջազգային համաձայնությունները, գերմանական ռազմական նավատորմի թնդանոթները ռմբակոծեցին Ամերիայի քաղաքացիական բնակչությունը, արյունալի կորուստներ պատճառելով նրան: Այդ ռազմական յելույթին դեմ-հանդիման,—մի յելույթ, վորը ֆաշիզմի ռազմատենչ տրամադրությունների վրդովեցուցիչ արտահայտությունն է հանդիսանում,—մենք, Իսպանիայի բանվորներս ու գյուղացիներս, ժողովրդի աշխատավոր մասսաներս, վոր մարտնչում ենք ազգային և ինտերնացիոնալ ֆաշիզմի դեմ մղվող պայքարի ավանգարդում և, պաշտպանելով մեր ազատությունը, դրանով իսկ վայրագ պատերազմի սարսափներից պաշտպանում ենք ամբողջ աշխարհի պրոլետարիատին, դիմում ենք ձեզ, Սոցիալիստական բանվորական Ինտերնացիոնալին, Կոմունիստական Ինտերնացիոնալին, Պրոֆմիությունների միջազգային միավորմանը պատկանող ընկերներ՝, դիմում ենք բանվորական կուսակցությունների ու պրոֆեսիոնալ կազմակերպությունների շարքերում գտնվող ամբողջ ակտիվ պրոլետարիատին և խնդրում ենք ձեզ ուժեղացնել ձեր համերաշխությունն իսպանական ժողովրդի հետ, վորի տներն ու անգեն գավակները նորից յենթարկվում են հանցավոր հարձակման: Մենք կոչ ենք անում ձեզ՝ հակահարված տալ ֆաշիստական կառավարություններին, վորոնք չտեսնված դաժանությամբ գրոհում են մեր խաղաղ բնակչության վրա, վորոնք վտանգի յեն յենթարկում ծերունիների, կանանց ու յերե-

խաներրի կյանքը։ Մենք նորից խնդրում ենք ձեզ՝ համաշխարհային պրոլետարիատի ավանդարդին, վորը կրում է այդ պրոլետարիատի պայքարի պանծալի դրոշը, ամենավճռական համատեղ գործողություններ ձեռնարկել՝ մոբիլիզացիայի յենթարկելու բոլոր ժողովուրդների պրոլետարական համերաշխությունը, ժողովուրդներ, վորոնք լի յեն վճռականությամբ՝ թույլ չտալու, վորպեսզի իրականանան համաշխարհային հրդեհ բորբոքելու մտադրություն ունեցող ֆաշիզմի դիտավորությունները։

Կեցցե՛ պրոլետարիատի միջազգային համերաշխությունը ֆաշիզմի դեմ մղվող պայքարում։ Հառա՛ջ, իսպանական ժողովրդի հետ միասին։ Հառա՛ջ, հանուն խաղաղության ու ազատության ամբողջ աշխարհում։

Իսպանիայի բանվորական սոցիալիստական
կուսակցության անունից—Քարտուղար՝
Ռամոն Լեմոնեդա։

Իսպանիայի կոմկուսի անունից—Գլխավոր քարտուղար՝
Խոզե Դիաս

Ընդհանուր բանվորական միության Գործկոմի
անունից—Գլխավոր քարտուղարի ժամանակավոր
պաշտոնակատար՝ Ֆելիպե Պրետել

ԸՆԿ. ԴԻՄԻՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՌԱՄՈՆ ԼԵՄՈՆԵԴԱՅԻՆ, ԽՈՍԷ ԴԻԱՍԻՆ ՅԵՎ ՖԵԼԻՊԵ ՊՐԵՏԵԼԻՆ

Ընկեր Դիմիտրովն Իսպանիայի բանվորական սոցիալիստական կուսակցության քարտուղար Ռամոն Լեմոնեդային, Իսպանիայի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Խոսե Դիասին և Իսպանիայի Ընդհանուր բանվորական միության գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Ֆելիպե Պրետելին ուղարկեց հետևյալ բովանդակությամբ մի հեռագիր.

«Ի պատասխան ձեր ս. թ. հունիսի 1-ի ռադիոգրի, տեղեկացնում ենք ձեզ, որ Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործկոմն ամբողջությամբ պաշտպանում է ձեր առաջարկը՝ գերմանական և իտալական ֆաշիզմի հարձակմանը յենթարկված իսպանական ժողովրդի պաշտպանության համար Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի, Կոմունիստական Ինտերնացիոնալի և Պրոֆմիությունների միջազգային միավորման համատեղ գործողություններ կազմակերպելու մասին:

Ֆաշիզմի ու պատերազմի դեմ մղվող պայքարում անշեղորեն հետևելով միջազգային պրոլետարիատի գործողությունների միասնություն հաստատելու քաղաքականությանը, անվերապահորեն կանգնած լինելով ֆաշիստ խռովարարների և ինտերվենտների դեմ հերոսաբար մարտնչող իսպանական ժողովրդի կողմը, Կոմունիստական Ինտերնացիոնալը քանիցս դիմել է Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալին՝ առաջարկելով միջազգային բանվորական կազմակերպությունների համատեղ գործողություններ կազմակերպել վորպես ամենավճռողական միջոց ֆաշիզմի դեմ մղվող պայքարում, ի պաշտպանություն դեմոկրատիայի և խաղաղության: Ցավոք սրտի, այդ առաջարկությունները մինչև այժմ դրական արդյունքներ չտվին՝ Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի ղեկավարության կողմից մերժվելու հետևանքով: Այմերիայի ռմբակոծությունից հետո ստեղծված դրության լրջությունը հաշվի առնելով և ձեր դիմումի հիման վրա մենք միջոցներ ենք ձեռք առնում՝ Սոցիալիստական բանվորական

ինտերնացիոնալի հետ կապ հաստատելու համար։ Այսօր մենք Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի նախագահ դե Բրուկերին ուղարկեցինք հետևյալ հեռագիրը. (հետևում է դե Բրուկերին ուղարկված հեռագրի տեքստը)։

Մենք կանենք այն ամենը, ինչ վոր մեզնից է կախված, վորպեսզի միջազգային պրոլետարիատը վերջապես ձեռք բերի հրամայականորեն անհրաժեշտ միասնությունը՝ խպանական ժողովուրդը ֆաշիստ բարբարոսներից պաշտպանելու գործում և միջազգային խաղաղությունը պահպանելու համար։

Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր
կոմիտեի անունից—
Գլխավոր քարտուղար՝ Գ. Դիմիտրով»։

ԸՆԿ. ԴԻՄԻՏՐՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ ԴԵ ԲՐՈՒԿԵՐԻՆ

Ընկ. Դիմիտրովը Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի նախագահ դե Բրուկերին հետևյալ հեռագիրն ուղարկեց Բրյուսել.

«Մենք Վալենսիայից ստացանք Իսպանիայի Սոցիալիստական կուսակցության, Կոմունիստական կուսակցության և Ընդհանուր բանվորական միության դիմումը, վորով առաջարկվում է գերմանական և իտալական ֆաշիզմի հարձակմանը յենթարկված իսպանական ժողովրդի պաշտպանության համար դիմել բանվորական միջազգային կազմակերպությունների համատեղ գործողությունների:

Յենթադրում ենք, վոր Դուք նույնպես արդեն ստացել եք այդ դիմումը: Այս կապակցությամբ մենք տեղեկացնում ենք Ձեզ, վոր մենք լիովին համաձայն ենք իսպանական ընկերների առաջարկությանը և ամբողջովին պաշտպանում ենք նրանց նախաձեռնությունը: Մենք մեր կողմից առաջարկում ենք բոլոր յերեք Ինտերնացիոնալների (Կոմունիստական Ինտերնացիոնալի, Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի և պրոֆմիությունների Միջազգային միավորման) համատեղ կոնտակտային հանձնաժողով ստեղծել՝ Գերմանիայի և Իտալիայի կողմից Իսպանիայում կատարվող ռազմական ինտերվենցիայի դեմ գործողությունների միջազգային միասնություն հաստատելու համար: Մենք պատրաստ ենք քննարկելու իսպանական ժողովրդի պաշտպանության համար ինչպես Ձեր, նույնպես և պրոֆմիությունների Միջազգային միավորման կողմից արվող ամեն մի առաջարկ:

Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործկոմի անունից—
Գլխավոր քարտուղար՝ Գ. Դիմիտրով»:

Բրյուսելից, 4/VI 1937 թ.
Ստացված է 5/VI 1937 թ.

ԴԵ ԲՐՈՒԿԵՐԻ ՀԵՌԱԳԻՐՆ ԸՆԿ. Գ. ԴԻՄԻՏՐՈՎԻՆ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԳԵՈՐԳԻ ԴԻՄԻՏՐՈՎԻՆ
ՄՈՍԿՎԱ

Նույնպիսի դիմում ստացել ենք Վալենսիայից: Լիովին դիտակցում ենք յեռանդուն գործողությունների անհրաժեշտությունը ու ավելի քան յերբևիցե լի յենք այդպիսի գործողություններ կատարելու վճռականությամբ: Մեր դիտավորությունների մասին իրազեկ ենք դարձրել մեր խսպանական բարեկամներին դեռևս նրանց դիմումն ստանալուց առաջ: Մեր Ինտերնացիոնալն իր պատասխանատվությամբ լիովին կկատարի իր պարտքը: Ինչպես Դուք գիտեք, մեր Ինտերնացիոնալի վո՛չ նախագահը, վո՛չ քարտուղարն անհրաժեշտ լիազորություններ չունեն նրա անունից մասնակցելու այն կոմիտեին, որ Դուք առաջարկում եք:

Դե Բրուկեր

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՆԱԽԱԳԱՀ ԴԵ ԲՐՈՒԿԵՐԻՆ

ԲՐՅՈՒՍԵԼ

Ստացանք Ձեր պատասխանը Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր կոմիտեյի այն հեռագրին, որի մեջ մենք, իսպանական բանվորական կազմակերպությունների դիմումի հիման վրա, առաջարկել էինք իսպանական ժողովրդի պաշտպանության համար գործողությունների միասնություն հաստատելու նպատակով ստեղծել յերեք Ինտերնացիոնալների կոնտակտային կոմիտե:

Ցավոք սրտի, Ձեր հեռագիրը պարզ պատասխան չի տալիս մեր արած կոնկրետ առաջարկին: Ձեր այն վկայակոչումը, թե Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի վո՛չ նախագահը, վո՛չ քարտուղարը լիազորություններ չունեն կոնտակտային կոմիտե ստեղծելու հարցի լուծման համար, համոզիչ չի թվում մեզ թեկուզ այն պատճառով, որ այդպիսի լիազորություններ Դուք կարող եք խնդրել և ստանալ Ձեր Ինտերնացիոնալի համապատասխան ինստանցիայից:

Չի՛ կարելի նաև ընդունել, որ ձևական լիազորությունների բացակայությունը վճռողական հանգամանք է հանդիսանում, յերբ խոսքը վերաբերում է գերմանական և իտալական ինտերվենտների հարձակմանը յենթարկվող իսպանական ժողովրդի կյանքին ու անկախությանը: Մենք չենք կարող բաժանել նաև Ձեր այն կարծիքը, թե Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալը լիովին կատարում է իր պարտքը, որչափով նա շարունակում է հրաժարվել իսպանական ժողովրդի պաշտպանության գործում միջազգային պրոլետարիատի բոլոր ուժերը միավորելուց:

Իսպանական ժողովրդի ոգին ծավալված համերաշխության շարժումն առայժմ դեռ ամենևին էլ բավարար չէ գլխավորապես այն պատճառով, որ միջազգային կազմակերպությունների գործողությունները բաժան-բաժան են: Այդ շարժումը տանապատկ-

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ված ուժ կստանար, յեթե վոր, չնայած բոլոր դժվարություններին, հաջողվեր գործողությունների միջազգային միասնություն հաստատել: Հենց այդ նպատակով ել մենք առաջարկեցինք ստեղծել յերեք Ինտերնացիոնալների կոնտակտային կոմիտե: Յեթե դուք, սակայն, վորևե պատճառով մեր առաջարկած՝ կոնտակտի ձևն անընդունելի յեք համարում Ձեզ Համար, ապա խսպանական ժողովրդի ազատության ընդհանուր գործի շահերն այնուամենայնիվ պահանջում են, վոր Դուք Ձեր կողմից անեք այլ կոնկրետ առաջարկներ՝ այս նույն նպատակին հասնելու համար: Մեզ համար գլխավորը վո՛չ թե գործի ձևն է, այլ եությունը:

Կոմունիստական Ինտերնացիոնալը, կատարելով այն ամենը, ինչ վոր իրենից է կախված՝ ֆաշիստ խռովարարների և ինտերվենտների վերաբերմամբ խսպանական ժողովրդի ամենատարագ հաղթանակն ապահովելու համար,— պատրաստ է առանց հապաղման—ինչպես մենք արդեն առաջ հայտարարել ենք—քննարկել Ձեր կողմից անելիք ամեն մի առաջարկ: Խսպանական բանվորական կազմակերպությունների հետ միասին մենք իրավունք ունենք Ձեր կոնկրետ առաջարկներին ապասելու այս կենսականորեն կարևոր հարցի առթիվ:

Մենք նաև նպատակահարմար կհամարեինք, անհրաժեշտ համատեղ գործողությունների իրականացումն արագացնելու նպատակով, ունենալ Կոմունիստական և Սոցիալիստական բանվորական Ինտերնացիոնալների ներկայացուցիչների մտքերի նախնական փոխանակություն: Ձեր համաձայնության դեպքում ապասում ենք այդպիսի հանդիպման տեղի ու ժամանակի վերաբերյալ հաղորդմանը:

Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր
կոմիտեի անունից—

Գլխավոր քարտուղար՝ Գ. Դիմիտրով:

ԻՍՊԱՆԻԱՅԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՌԱՄՈՆ ԼԵՄՈՆԵԴԱՅԻՆ

ԻՍՊԱՆԻԱՅԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԽՈՍԷ ԴԻԱՍԻՆ

ԻՍՊԱՆԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՖԵԼԻՊԵ ՊՐԵՏԵԼԻՆ

Վալենսիա

Իսպանական ժողովրդի պաշտպանության համար գործողությունների միջազգային միասնություն հաստատելու վերաբերյալ մեր առաջարկի առթիվ մենք Բանվորական Սոցիալիստական Ինտերնացիոնալի նախագահից ստացանք հետևյալ պատասխանը.

«Նույնպիսի զիմում ստացել ենք Վալենսիայից։ Լիովին գիտակցում ենք ֆեոդալն գործողությունների անհրաժեշտությունն ու ավելի քան յերբևիցե լի յենք այդպիսի գործողություններ կատարելու վճռականությամբ։ Մեր զիտավորությունների մասին իրազեկ ենք դարձրել մեր իսպանական բարեկամներին զեռևս նրանց զիմումն ստանալուց առաջ։ Մեր Ինտերնացիոնալն իր պատասխանատվությամբ լիովին կկատարի իր պարտքը։ Ինչպես Դուք զիտեք, մեր Ինտերնացիոնալի վո՛չ նախագահը, վո՛չ քարտուղարն անհրաժեշտ լիազորություններ չունեն նրա անունից մասնակցելու այն կոմիտեին, որ Դուք առաջարկում եք։ Դե Բրուկեր»։

Մեջբերելով ձևական կարգի պատճառաբանություններ, այն և՝ համապատասխան լիազորությունների բացակայությունը, Սոցիալիստական բանվորական Ինտերնացիոնալի նախագահը խուսափեց՝ իսպանական ժողովրդին պաշտպանելու համար յերեք Ինտերնացիոնալների համատեղ գործողությունների կոնտակտային կոմիտե հաստատելու վերաբերյալ մեր առաջարկին ուղղակի պատասխան տալուց։ Շարունակում ենք պնդել կոնկրետ առա-

Ջարկների վրա, վորոնց նպատակն է՝ դործողությունների մի-ջաղդային միասնության հաստատումը Սոցիալիստական բանվո-րական Ինտերնացիոնալի ղեկավարության կողմից։ Այդ նպատա-կով առաջարկել ենք նաև ունենալ Կոմունիստական և Սոցիալիս-տական բանվորական Ինտերնացիոնալների ներկայացուցիչների հանդիպում։

Պատասխանն ստանալուն պես կհաղորդենք։

Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր
կոմիտեյի անունից—
Գլխավոր քարտուղար՝ Գ. Դիմիտրով։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԻՍՏԵՄԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220038390

ԳԻՆԸ 20 ԿՈՊ. (084) Ձ 66

А II 38390

Г. ДИМИТРОВ

УРОКИ АЛЬМЕРИИ

Армпартиздат. Ереван, 1937 г.